Ա. ՎՎԵԴԵՆՍԿԻՅ



# ԴՈՒԼԱՆՅԱՆ ԿԱՐՈՆ

ՊԵՏՀՐԱՏ - ՅԵՐԵՎԱՆ
1937

891.7Ռ
Վ-92

12 SEP 2014
5240

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍԱԿԻ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Պատասխանատու. խմբագիր ՍԻՐԱՍ
Տեխ. խմբագիր Ծ. ՃԻՆԻԲԱԼԱՅԱՆ
Սրբագրիչ Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Гос. Публ. Библиотека
ՀԽՍՀ-ССР
101
38

Հանձնված է արտադրության հունվարի 13-ին 1937 թ. Ստորագրված է տպագրության 1 փետրվարի 1937 թ. Գլավլիտ № 271. Հրատարակչություն 3432. Տիրաժ 3000. Ստատֆորմատ Ա-5. Ծավալ 1 մամուլ. Պատվեր № 78.

Типография Краевого Армянского Издательства „ГРО"
Ростов—Дон, Ворошиловский пр, № 27.

2011-05
891.71Ա
Վ-92

Ա. ՎՎԵԴԵՆՍԿԻՅ

# ԴԻԼԱՆՅԱՆ ԿԱՐՈՆ

Փոխադրություն
Հ. Տ.-ԱՎԱԳՅԱՆԻ

ՆԿԱՐՆԵՐ
Կ. ԿՈՒԶՆԵՑՈՎԻ



ՊԵՏՀՐԱՏ—ՅԵՐԵՎԱՆ—1937



Կանգնած իրար կողք կողքի
տղերքն ասին, հինգ հոգի՝—
— Հրեն կեչին դաշտում կանգնած
տերևներով թրթռուն,
Շոգեշարժից արագընթաց
ո՞վ կհասնի են կեչուն։
Յես — վո՛չ։
Յես — վո՛չ։
Յես — վո՛չ։
Յես — վո՛չ։
Իսկ Դիլանյան Կարոն զգաստ
ասաց իսկույն — «Յե՛ս պատրաստ»։
— Մարգագետնում կեչին կանգնած
տեսնում եմ յես,
Շոգեշարժից արագընթաց
կհասնեմ յես։







Յերեք րոպե ահա անցավ,
մեկ, յերկ, յերեք,
Կարոն արդեն կեչուն հասավ,
դե՛ նայեցեք։



Կանգնած իրար կողք կողքի,
տղերքն ասին, հինգ հոգի՝—
— Հրեն գետի խոր ջրերում
ժայռն ե կանգնած ահագին,
Ո՞վ ե նավից արագ լողում,
որ շուտ հասնի են ժայռին։
Յես — վո՛չ։
Յես — վո՛չ։
Յես — վո՛չ։
Յես — վո՛չ։





Իսկ Դիլանյան Կարոն զգաստ
ասաց իսկույն—«Յե՛ս պատրաստ»։
— Գետի ջրում ժայռը կանգնած
տեսնում եմ ես,
Շոգենավից արագընթաց
լող կտամ ես։







Յերեք րոպե ահա անցավ,
մեկ, յերկ, յերեք
Կարոն ժայռին արդեն հասավ,
դե՛ նայեցեք։





Կանգնած իրար կողք կողքի
տղերքն ասին հինգ հոգի՝ —
— Ցանկապատից ենդին ճամբան
տանում ե խորքն անտառի,
Են ո՞վ ճարպիկ կատվի նման
ցանկապատից կթռչի։
    Յես—վո՛չ։
    Յես—վո՛չ։
    Յես—վո՛չ։
    Յես—վո՛չ։
Իսկ Դիլանյան Կարոն զգաստ
ասաց իսկույն—«Յե՛ս պատրաստ»։
— Տեսնում եմ յես հրեն ճամբան
ու անտառը,
Կթռչեմ յես կատվի նման
ցանկապատը։





Յերեք վայրկյան ահա
անցավ,
մեկ, յերկ, յերեք,
Ցանկապատը Կարոն
թռավ,
դե՛ նայեցեք։





4092

Հուշակավոր վազ տվող—
Դիլանյան,
Նշանավոր լող տվող—
Դիլանյան,
Զարմանալի պատ թռչող—
Դիլանյան,
Ֆիզկուլտուրնիկ—մարտընչող—
Դիլան յան։



236

5240

ԳԻՆԸ 40 ԿՈՊ.

На армянском языке

А. ВВЕДЕНСКИЙ

# ВОЛОДЯ ЕРМАКОВ

ДЛЯ ДОШКОЛЬНОГО ВОЗРАСТА.

ՀԱՄՀ ՊԵՏՀՐԱՏ

АРМЕНГИЗ—ЕРЕВАН

ՀՀ Ազգային գրադարան
NL0386784